ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ռեալ Բուսինեսս ՍՊԸ-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/87 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Աղբի տարաներ Ծավալը՝ 1100 լ կամ 1,1 մ3 +/- 5% /կապված չափերի հնարավոր շեղումից/ Լայնությունը (ներառյալ կողային պտտվող դարձյակը), 1360 մմ +/- 10% Խորությունը (ներառյալ ծխնիները), 1050 մմ +/- 10% Բարձրությունը, 1460 մմ +/- 10% Քաշը `ոչ ավելին115 կգ Բեռնունակությունը, Ոչ պակաս 400 կգ Գույնը արծաթագույն Տարայի պատյանը՝ նյութը պողպատ, մշակված տաք ցինկապատման մեթոդով, լոգարանում լիարժեք ընկղմամբ: Կոնտեյների պատյանը և նրա կողային պատերը պետք է ունենան կոշտ դրոշմված տարրեր: Աղբամանի տեղափոխման համար նախատեսված բռնակները՝ ոչ պակաս 4 հատ, պետք է լինեն մետաղական և զոդված լինեն աղբամանի իրանին: Պատյանի վերին եզերքը պետք է պատրաստված լինի 2 մմ-ից ոչ պակաս պողպատից: Կողային դարձյակների առկայության դեպքում հանգույցների մետաղի հաստությունը 1,5 մմ-ից ոչ պակաս: Դարձյակի խողովակի պատի հաստությունը 4 մմ-ից ոչ պակաս: Դարձյակի աշխատանքային մասի երկարությունը 65 մմ-ից ոչ պակաս: Ամբողջական տարայի պատի հաստությունը, առնվազն 1.2 մմ (առանց ցինկապատ ծածկույթի): Տարայի կափարիչը՝ դարձյակների առկայության դեպքում կափարիչը հագեցած պետք է լինի 2 պարույրային զսպանակներով բացվող մեխանիզմով, բացվում և փակվում է ձեռքով և մեխանիկորեն (աղբատարի հետին բեռնմամբ բեռնման/բեռնաթափման իրականացման ժամանակ), իսկ դարձյակների բացակայության դեպքում՝ բացվում և փակվում է ձեռքով, իսկ կափարիչը ամրացված է աղբամանի իրանին: Կափարիչի նվազագույն հաստությունը՝ 1,2 մմ: Պտտվող անիվային հենարաններ 4 ռետինացված անիվները իրարից անկախ պտույտով, 200մմ տրամագծով : Առնվազն 2 անիվները պետք է հագեցած լինեն արգելակման մեխանիզմով: Աղբամանի

	հատակային մասի լայնքով պետք է ունենա լրացուցիչ ամրություն առնվազն 2 մմ հաստությամբ և առնվազն 130 մմ լայնությամբ մետաղական գոտի, որի վրա պետք է ամրացվեն 4 անկախ պտտվող անիվները: Անվահեծերը պատրաստված լինեն պլաստիկից, որոնց դինամիկ բեռնունակութունը յուրաքանչյուր անիվային առանցքի վրա լինի առնվազն 200 կգ: Անիվային առանցքակալները պետք է ամրապնդվեն կոնտեյների պատյանի ներքևում, առնվազն 2 մմ հաստությամբ և առնվազն 130 մմ լայնությամբ: Անիվային առանցքակալների հենարանը պետք է պատրաստված լինի առնվազն 3 մմ հաստությամբ եռանկյունաձև մետաղից: Բեռնարկղի բեռնաթափման պահանջները Կոնտեյների բեռնաթափումը պետք է ապահովվի տրանսպորտային միջոցների հետին բեռնմամբ: Ապրանքները նոր են, չօգտագործված, այդ թվում նա երրորդ անձանց կողմից, նախկինում չվերանորոգված, չարդիականացված, գրավի և կալանքի տակ չի գտնվում: Ապրանքը չունի մեխանիկական վնասների հետքեր, ինչպես նաև այլ անհամապատասխանություններ մատակարարվող ապրանքների պաշտոնական նկարագրությանը: Ապրանքների համար երաշխիքային ժամկետը սահմանվում 18 ամիս, հանձման -ընդունման արձնագրության ստորագրման պահից: Ապրանքների երաշխիքային սպասարկումն իրականացվում է մատակարարի կողմից հաճախորդի ապրանքի գտնվելու վայրի այցելության դեպքում՝ հաճախորդի կողմից հայտը ստանալու պահից 48 ժամվա ընթացքում: Եթե հնարավոր չէ թերությունները վերացնել նշված ժամանակահատվածում, հաճախորդի հետ գրավոր համաձայնությամբ, թերությունների վերացման ժամկետը երկարաձգվում է մինչև 10 օրացուցային օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ռեալ Բուսինեսս ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/87 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	